

ՔԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ԵՐԿՈՒ ՀԱՏ ՄՈՄ**

Այս գիշեր
Աստուածամօր մեծ պատկերին առջեւ ես
Երկու հատ մոմ վառեցի

Եւ ըսի -
Եթէ քեզի մոմ մը վառել կը բաւէ
Եթէ մոմով մը կատարուն պիտի իղձերս բոլոր
Աստուածամայրըս իմ դուն
Ըրէ այնպէս մը որ հասնիմ երջանկութեան քայլ առ քայլ
Որովհետեւ աւելի լաւ գիտես դուն
Գիտես թէ ինչ պէտք է ինծի որ երջանիկ ըլլամ ես
Մի մոռնար
Այդ մոմերէ մին ես եմ

Աստուածամօր այսպէս ըսի այդ գիշեր
Երբ պատկերին երկու հատ մոմ վառեցի

Ու ըսի -
Այդ միւս մոմն ալ հաւանաբար կը ճանչնաս թէ որունն է
Անոր մասին շոտ եմ խօսեր քեզի հետ
Ան գուցէ
Աստուածամօր կամ Աստուծոյ մասին շատ բան չի գիտեր
Բայց հոգ չէ
Եւ կամ ան
Սա վայրկեանիս լուր չունի թէ մոմ մըն ալ
Իրեն համար վառեցի
Հոգ չէ բայց
Աստուածամայրըս իմ դուն
Ըրէ այնպէս մը որ ան ալ երջանկութիւնը ճանչնայ
Մի մոռնար
Այդ մոմերէն մին ան է

Ու գիտես թէ զինքը որքան կը սիրեմ

ՋԱՀՐԱՏ